ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2019 թվականի N 83 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՏԱՇՏՈՒՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԼԻՃՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1247-Ն որոշման, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ և 24-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով՝

**որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ

առևտրային կազմակերպութան միջև կնքված միացման պայմանագիրը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերակազմակերպման հետևյալ կարգն ու պայմանները.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի սույն որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանձնում է, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է միացվող կազմակերպության առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները, գույքը, այլ գույքային իրավունքները, պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունները: Հանձնում – ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում են կողմերին լիազոր ներկայացուցիչների կողմից:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպված է համարվում միացման արդյունքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Տաշտունի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Լիճքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության վրա:

7. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 11 հունվարի 2019 թվականի N 01-Ա, 11 մարտի 2019 թվականի N 35-Ա որոշումները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**